

մը տալու համար՝ Գանովաս տէլ Գաս-դիլլօ նախարարապետին այս նկատմամբ Յուլիս 1ին տուած տեղեկութենէն հետեւեալը կը քաղենք: Եթէ ծամբայ ելած 9000 զինուոր Գոպա համին, հոն տեղուան քանակը՝ առանց հիւանդները հաշուելու, պիտի ունենայ 20 զօրավար, 229 հրամանատարութեան աջակց պաշտօնակալ, 1845 սպայ, 39.885 ոստանաւոր՝ 2596 ճիւղոր, 671 թնդանօթածիգ՝ 4400 ոստիկան՝ 2700 ծովամարտիկ՝ 976 ոստիկանական զինուոր, 414 ռահվիրայ եւ 1152 հրոսակ: Բաց ասկէ պատերազմի պաշտօնեայն Գուպայի ընկիւններէն ազատական՝ հրոսակներու զնդեր կազմելուն հաւանութիւն տուաւ:

Տառ համակերպի է Փլէմախօս Բեդգիացիներու եռանդուն գործունէութիւնը, որով կը ծանին Փլեմերէնը ամբողջ Բեդգիոյ մէջ ընդհանրացնել եւ քացարձակ տիրող լեզու ընել ի սպառ արտաքինով զաղդիական ազդեցութիւնը: Փլեմերէնը ստորին-գերմաներէնի տեսակ մըն է եւ հոլանտերէնէ գրեթէ ուղղագրութեամբ միայն կը տարբերի. նոյնին տարածման գործունէութիւնը Բեդգիայի հոլանտայէն բաժնուելէն (1830ին) ի վեր սկսաւ: Փլեմերէնի գործածութեան խնդիրը վերջերս աւելի սուր կերպարանք առաւ. Փլեմախօս Բեդգիացիներն իրենց լեզուն պետական խորհրդարանը մտցնելէն վերջ, քանակին մէջ ալ կը ջանան նոյնը խոթել թաղիներով ի հարկէ առաջին դիտարութեանց: Շորերս ազգային պահպան գորքին անդամ՝ մը զօրավարին իրեն զաղդիներէն ուղղած հարցումներուն նոյն լեզուով պատասխան տալ չուզելով՝ պատերազմական դատարանէն դատապարտուեցաւ: De Vlaamsche Nacht ընկերութիւնը այս դատաւճռնի դէմ քողորեց եւ Բոնդա զօրապետէն Փլեմերէն պատասխան մ'ընդունեցաւ, որուն մէջ կը ծանուցանէ թէ զաղդիներէնը քանակին եւ ազգային պահպան գորքին մէջ գործածուած մի միակ լեզուն է եւ մի միակ ալ պիտի մնայ: Հարկ չկայ ըսել թէ Փլէմախօս Բեդգիացիները վերջ ի վերջոյ իրենց նպատակին պիտի հասնին:

Շուէտի ու Նորվեկիոյ մէջ եղած տարածայնութիւնը Մայիս 30էն վեր

աւելի խաղաղական կերպարանք մ'առաւ շնորհիւ Օսգար Թագաւորին քաղաքականութեան: Նորվեկիական «Սորթլինկ», իր Յուլիս 6ի նստին մէջ վարչութեան ղեկավարութեանց եւ հիպատոսներու պահպանութեան համար ըրած ծախքերուն գրեթէ միաձայն հաւանութիւն տուաւ: Ստուար մեծամասնութեամբ մ'ալ ընդունուեցաւ 1895/96ի նոյն նպատակներու համար առաջարկուած հաշուեցոյցը: Ըստ քաւականի գնահատելի է այս հաւանութիւնը՝ նկատելով թէ Նորվեկացիները յատուկ ղեկավարներ ու հիպատոսներ ունենալ կը պահանջեն, եւ այս պատճառաւ Շուէտի օգտին համար այսպիսի նպատակներով մասնաւոր ծախք ընելուն քնաւ տրամադրուած չին:

Յուլիս 15ին սպանութեան փորձ մը կատարուեցաւ Պուլկարիոյ վաղեմի Ստամպուլի ծանարարապետին վրայ: Ստամպուլի ծանարարապետ վիրաւորուեցաւ եւ Յուլիս 18ին վախճանեցաւ:

ԲՈՎԱՆ ԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԻՅՈՒՄԵՆԵՆԵ

ԼԵԶՈՒՄԱՐԱՆՍԿԱՆ — Սոթաւ Պուկէ եւ հայերէն լեզուին գոթարէնի վոյա ըրած ազդեցութիւնը. 227:

ՊԵՏՄԱՐԱՆ — Քանի մը դիտողութիւնք. 231: ՈՒՂԻԳՐԱՐԱՆ — Սեւ ծովու ոռոսական եզերքը. 232: ԹԻՎԻԶՈՒԹԻՒՆ — Ատեալէնի քարայրը. 234: ՆՎԱՐԱՐԱՆԿԱՆ — Դրանսիոյ (աւստրիոյ չայոց մայրաքաղաքը. 239 (Պատկերով):

ԿԵՆՍՄԱՐԱՆ — Ամիրսովաթայ սաղմիսը. 246: ԲԱՆԱՅՏԻՎԱՆ — Խորհուրդ խորհրդոց վրայ. 249:

ԴՊՐՈՑԱՎԱՆ — Մրցանակաբաշխութիւն Վիեննական Միեթարեանց վարժարանին ի Բանկալթի, Կ. Պոլիս. 250:

ՀՆԱՅՈՍՄԱՆ — Հայկական հին քանուածք մը. 253 (Պատկերով):

ՆԵՐՍԵՆԻ

ՄԱՐԱՐԱՆՈՒԹ — Նրկաթեայ առաստաղ. 254: Առանց պայտի. 254: Սզոյ դոյնը. 255: Հնդկատառի վայրենի անասնոց եւ օճորուն վրայ գոյնը. 255: Անդաւադանտեան նամակատար նաւերու շուտութիւնը. 255:

ՏՆՏԵՄԱՆ — Կանթիլի ինամը. 255: Փայտի որդեղն պահանջելու միջոց. 255: Վաւարանի միջոց մարքի. 256: Միջոց ու գետնիմանք. 256: Ժանդը քշել. 256: Չուրն նրկայն ժամանակ պահել. 256:

ՔՐԴԱԿԱՆ ՆԵՐՍԵՆԻ 257:

ՀՐԱՄԱՐԱՆԻԶ ԵՊ ՊԱՏԱՆՈՒՄԱՆՈՒ ԽՐԱՐԱՆԻ

Դ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԻԲԱՐԵԱՆ. ՑՈՐԱՆ